**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ և ՊԱՏՃԵՆԱՀԱՆՈՂ ՍԱՐՔԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**
**N ՎԱ-ԱԱՏՄ-ԳՀԾՁԲ-26/11-1**

ք. Երևան «10» 11 2025թ.

Վարչապետի աշխատակազմն, ի դեմս վարչապետի աշխատակազմի գործերի կառավարիչ Գարիկ Բոշյանի, որը գործում է աշխատակազմի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ -ն, ի դեմս տնօրեն Ռաֆիկ Ասոյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կարիքների համար համակարգչային և պատճենահանող սարքերի պահպանման և վերանորոգման ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1, N 1.1 և N 1.2 հավելվածներով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1, N 1.1 և N 1.2 հավելվածներով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝**

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1, N 1.1 և N 1.2 հավելվածներում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1, N 1.1 և N 1.2 հավելվածներով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1, N 1.1 և N 1.2 հավելվածներով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործընթացի ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

**3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ**

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված <u>15</u> աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

**4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ**

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը կազմում է 3 480 000 (երեք միլիոն չորս հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

4.3 **Սարքերի և սարքավորումների վերանորոգման ծառայությունների դեպքում, մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝**

***ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.***

***ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.***

***ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.***

***Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.***

***Ք-ն մատուցված ծառայության քանակն է:***

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը

7.11 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.12 Սույն պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 1.2, N 2, N 3, N 3.1 և N 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.13 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.14 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի

կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում նախորդ համաձայնագրով սահմանված ծառայության մատուցման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասը աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

7.15 Սույն Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո պայմանագրով սահմանված Պատվիրատուի իրավունքները և պարտավորությունները փոխանցվում են **Առողջապահական եվ աշխատանքի տեսչական մարմնին՝** բացառությամբ ֆինանսական գործառույթների՝ հիմք ընդունելով «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ և 18-րդ հոդվածների պահանջները:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| Վարչապետի աշխատակազմ<br>ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն, 1<br>ՀՀ ՖՆ գործառնական վարչություն<br>Հ/Հ<br>ՀՎՀՀ 02505554 | «Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ<br>Ք. Երևան, ԲԱԲԱՋԱՆՅԱՆ Փ. 103-11<br>«Արարատբանկ» ԲԲԸ<br>Հ/Հ 1510032344900100<br>ՀՎՀՀ 02228296 |
| ----------------------------------<br>(ստորագրություն)<br>Կ.Տ. | ----------------------------------<br>(ստորագրություն)<br>Կ.Տ. |

Հավելված N 1
«10» 11 2025թ. կնքված
ՎԱ-ԱԱՏՄ-ԳՀԾՁԲ-26/11-1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ* ՀՀ դրամ

| Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | Պայմանագրի ընդհանուր առավելագույն գինը /ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատուցման | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | հասցեն | ժամկետը |
| 1 | 50311240/502 | Պատճենահանող սարքերի վերանորոգման ծառայություններ՝ համաձայն հավելված 1.1 | դրամ | 1 980 000 | 1 | Ք. Երևան, Արարատյան 26 փ | ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում, կնքված համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 365 օրացուցային օր |
| 2 | 50311240/509 | Պատճենահանող սարքերի վերանորոգման ծառայություններ՝ համաձայն հավելված 1.1 | դրամ | 400 000 | 1 | Ք. Վանաձոր, Գարեգին Նժդեհի 14 փ | ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում, կնքված համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 365 օրացուցային օր |
| 4 | 50311240/511 | Պատճենահանող սարքերի վերանորոգման ծառայություններ՝ համաձայն հավելված 1.1 | դրամ | 400 000 | 1 | Ք. Աբովյան Հատիսի 22 փ | ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում, կնքված համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 365 օրացուցային օր |
| 5 | 50311240/512 | Պատճենահանող սարքերի վերանորոգման ծառայություններ՝ համաձայն հավելված 1.1 | դրամ | 400 000 | 1 | Ք. Արտաշատ, Արամ Խաչատրյան 116 փ | ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում, կնքված համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 365 օրացուցային օր |
| 6 | 50311120/511 | Համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ՝ համաձայն հավելված 1.2 | դրամ | 300 000 | 1 | Ք. Երևան, Արարատյան 26 փ | ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում, կնքված համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 365 օրացուցային օր |

*Վճարումը կիրականացվի փաստացի մատուցված ծառայությունների դիմաց՝ ըստ N 1.1 և N 1.2 հավելվածների գնացուցակի:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
Վարչապետի աշխատակազմ
ք.Երևան, Հանրապետության հրապարակ,
Կառավարական տուն, 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ
ՀՎՀՀ 02505554

(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**
«Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ
Ք. Երևան, ԲԱԲԱՋԱՆՅԱՆ Փ. 103-11
«Արարատբանկ» ԲԲԸ
Հ/Հ 1510032344900100
ՀՎՀՀ 02228296

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 1.1
«10» 11 2025 թ. կնքված
ՎԱ-ԱԱՏՄ-ԳՀԾՁԲ-26/11-1 ծածկագրով պայմանագրի

# Գ Ն Ա Ց ՈՒ Ց Ա Կ

## Պատճենահանող սարքերի վերանորոգման ծառայությունների միավոր առավելագույն գների

| Պատճենահանող սարքերի անվանումները | Մատուցվող ծառայությունների ցանկը | Առավելագույն միավորի Գին/ՀՀ դրամ/ | | | |
|---|---|---|---|---|---|
| | | Զ/Բ 1 /Արարատյան 26/ | Զ/Բ 2 /Ք. Վանաձոր, Գարեգին Նժդեհի 14 փ/ | Զ/Բ 4 /Ք. Աբովյան Հատիսի 22 փ/ | Զ/Բ 5 /Ք. Արտաշատ, Արամ Խաչատրյան 116 փ/ |
| Բազմաֆունկցիոնալ տպիչների / լազերային/ սարքերի սպասարկում և համակարգիչների վերանորոգում<br><br>PANTUM M6500<br>Konica Minolta, bizhub 306 (A8A 1021)<br>HP Laserjet pro MFP M130fn<br>Sansung ProXpress M3370FD<br>HP Color Laser Jet PRO M 452dn<br>HP Laser Jet PRO M426fdn<br>HP Laser Jet PRO MFP<br>HP Laser Jet M1120MFP<br>HP Laser Jet Pro MFP N 227 fdn<br>Work Centre3215<br>CanonLaserBase MF 3110<br>Canon Inc., MF264dw II<br>Canon Inc., MF655Cdw, Canon<br>Canon Inc., MF463dw II<br>HP Laser Jet 1018<br>HP Laser print 1022<br>HP Laser Jet 1102 | Տպիչների /բազմաֆունկցիոնալ/ դիագնոստիկա | 560 | 2000 | 1800 | 1880 |
| | Տպիչների /բազմաֆունկցիոնալ/ պրոֆիլակտիկա | 980 | 3500 | 3150 | 3290 |
| | Լազերային տպիչների լազերի փոխարինում, ներառյալ լազերը: | 1540 | 5500 | 4950 | 5170 |
| | Մագնիսական լիսերի փոխարինում նորով առանց լիցքավորման, ներառյալ մագնիսական լիսերը: | 840 | 3000 | 2700 | 2820 |
| | Թմբուկի փոխարինում նորով/ներառյալ թմբուկը/ | 560 | 2000 | 1800 | 1880 |
| | Մաքրող դանակի փոխարինում նորով, ներառյալ մաքրող դանակը | 700 | 2500 | 2250 | 2350 |
| | Կարատոնի փոխարինում նորով առանց լիցքավորման, ներառյալ կարատոնը | 700 | 2500 | 2250 | 2350 |
| | Վառարանի թերմոթաղանթի փոխարինում նորով, ներառյալ թերմոթաղանթը | 2380 | 8500 | 7650 | 7990 |
| | Վառարանի ռետինե գլանի փոխարինում նորով, ներառյալ ռետինե գլանը: | 1820 | 6500 | 5850 | 6110 |
| | Թղթի մատուցման ռետինե լիսեռի փոխարինում նորով, ներառյալ թղթի տրման ռետինե լիսեռը | 2100 | 7500 | 6750 | 7050 |
| | Սկաների ռետինե գլանի փոխարինում նորով, ներառյալ ռետինե գլանը | 2380 | 8500 | 7650 | 7990 |
| | Սկաների տպասալի փոխարինում , ներառյալ տպասալը | 4340 | 15500 | 13950 | 14570 |
| | Քարթրիջի վերանորոգում, ներառյալ պահեստամասերը բազմաֆունկցիոնալ տպիչ սարքի համար | 980 | 3500 | 3150 | 3290 |
| | Քարթրիջի լիցքավորում /տպաքանակը 2000 էջ/ ներառյալ տոները բազմաֆունկցիոնալ տպիչ սարքի համար | 980 | 3500 | 3150 | 3290 |
| | Քարթրիջի լիցքավորում /տպաքանակը 2000 էջ/ | 1120 | 4000 | 3600 | 3760 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ներառյալ տոները բազմաֆունկցիոնալ տպիչ սարքի համար՝ MF463dw II | | | | |
| | Սկաների սնուցման բլոկի նորոգում | 1540 | 5500 | 4950 | 5170 |
| **Ընդամենը / ՀՀ դրամ/** | | **23520** | **84000** | **75600** | **78960** |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
Վարչապետի աշխատակազմ
ք.Երևան, Հանրապետության հրապարակ,
Կառավարական տուն, 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ
ՀՎՀՀ 02505554

---------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**
«Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ
Ք. Երևան, ԲԱԲԱՋԱՆՅԱՆ Փ. 103-11
«Արարատբանկ» ԲԲԸ
Հ/Հ 1510032344900100
ՀՎՀՀ 02228296

---------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 1.2
« 10 » 11 2025 թ. կնքված
ՎԱ-ԱԱՏՄ-ԳՀԾՁԲ-26/11-1 ծածկագրով պայմանագրի

**Գ Ն Ա Ց ՈՒ Ց Ա Կ**

**Համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ**

| Համակարգչային սարքերի անվանումները | Մատուցվող ծառայությունների ցանկը | **Առավելագույն միավորի Գին/ՀՀ դրամ/** |
|---|---|---|
| | | **Զ/Բ 6 /Արարատյան 26/** |
| 1. Համակարգիչ ASUS (պրոցեսոր Intel® Core(TM) i5-8500CPU @ 3.00GHz 3.0GHz/RAmDDR4 8.00GB) /մոնիտոր DELL Flat panel/<br><br>2.Դյուրակիր համակարգիչներ՝<br>HP<br>ACER<br>DELL INSPIRON<br>Los<br>3.Պլանշետ Lenovo Tab 4<br><br>4. Պրոցեսորներ՝<br>Fujitsu<br>ASROK<br>HP<br>Intel<br>Pentium<br>Inter core i3<br>Inter core i7<br><br>5.Սերվեր DEL POWER EDGE T31<br>Սերվեր DEL POWER EDGE T30<br><br>6. Մոնիտորներ՝HP W2072a<br>Samsung E1920<br>Orange<br>HP V213a<br>Dell E2014<br>Fujitsu<br>Philips<br>HP<br>DAEWOO | Դիագնոստիկա և եզրակացության տրամադրում | 850 |
| | Պրոֆիլակտիկա, ընդհանուր կարգավորում և մաքրում | 1190 |
| | Սնուցման համակարգի նորոգում մոնիտորների համար | 1870 |
| | Սնուցման համակարգի նորոգում DCM, E-pro 600V անխափան սնուցման սարքերի (UPS-ների) համար | 1870 |
| | Սնուցման համակարգի նորոգում համակարգիչների համար | 1530 |
| | Սնուցման համակարգի նորոգում | 1530 |
| | Մայր տպասալիկի նորոգում / ներառյալ պահեստամասերը/ | 2210 |
| | BIOS-ի վերածրագրավորում | 1190 |
| | Պրոցեսորի հովացուցիչի փոխարինում /ներառյալ հովացուցիչը/ | 2210 |
| | Արտաքին սնուցման բլոկի կամ լիցքավորիչի նորոգում մոնիտորների համար | 2210 |
| | Արտաքին սնուցման բլոկի կամ լիցքավորիչի նորոգում | 2210 |
| | DVD-RW փոխարինում /ներառյալ DVD-RW/ | 4420 |
| | Մայր տպասալիկի փոխարինում /ներառյալ տպասալիկը/ | 12920 |
| | Մայր տպասալիկի փոխարինում /ներառյալ տպասալիկը/ մոնիտորների համար | 4420 |
| | Օպերատիվ հիշողության մոդուլի RAM փոխարինում /2GB, նվազագույն MHz/ ներառյալ մասերը/ | 4420 |
| | Օպերատիվ հիշողության մոդուլի RAM փոխարինում /4GB, նվազագույն MHz/ ներառյալ մասերը/ | 6120 |
| | Կոշտ սկավառակ HDD փոխարինում նորով 500 GB /ներառյալ կոշտ սկավառակը/ | 11560 |
| | Հիշողության սարք SSD փոխարինում նորով 960 GB /ներառյալ SSD | 10880 |
| | Էկրանի վերանորոգում/ ներառյալ մասերը/ | 5100 |
| **Ընդամենը / ՀՀ դրամ/** | | **78710** |

Պարտադիր պայմաններ N 1.1 N 1.2 հավելվածների համար՝

1. *Ծառայությունների գները ներառում են դրա ընթացքում օգտագործվող բոլոր նյութերի ու պահեստամասերի գները:*
2. *Պահեստամասերը կտրամադրվեն Կատարողի կողմից և լինեն չօգտագործված:*

3. Ծառայությունների մատուցման ժամանակ փոխարինված պահեստամասերի կամ այլ սարքավորումների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից Ծառայությունն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 180 օրացուցային օրը:
4. Կատարողը Պատվիրատուի պահանջով կտրամադրի տեղեկանք՝ Պատվիրատուի սարքավորումը Կատարողի սպասարկման կետում գրանցելու օրվա և ժամի մասին:
5. Ծառայությունները կմատուցվեն Պատվիրատուի սարքը կամ սարքավորումը Կատարողի սպասարկման կետում գրանցվելու օրվանից 5 օրյա ժամկետում:
6. Պատվիրատուի պահանջով, հարկ եղած դեպքում, ծառայությունները կմատուցվեն նաև տեղում:
7. Կատարողի մոտ պահեստամասի բացակայության դեպքում, Պատվիրատուի համաձայնությամբ, կարող է սահմանվել ծառայության մատուցման այլ ժամկետ՝ առավելագույնը երեսուն աշխատանքային օր:
8. Եթե ծառայությունը սահմանված ժամկետում չի մատուցվել, ապա անհրաժեշտության դեպքում Կատարողի կողմից Պատվիրատուին ժամանակավոր օգտագործման համար կտրամադրվի աշխատող այլ համանուն սարքեր, սարքավորումներ:
9. Եթե Պատվիրատուին հայտնի չէ սարքի կամ սարքավորման անսարքության պատճառը, ապա Կատարողը իրականացնում է դիագնոստիկա և եզրակացություն է տրամադրում Պատվիրատուին, որից հետո Պատվիրատուն, ելնելով նպատակահարմարությունից, իր հայեցողությամբ, դադարեցնում կամ հանձնարարում է կնքվելիք գնման պայմանագրով նախատեսված, իր կողմից մատնանշված ծառայության մատուցումը:

***10" Ծառայությունների միավոր գները հաշվարկված են սույն Պայմանագրի 4.3 կետով սահմանված բանաձևի համաձայն:***

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Վարչապետի աշխատակազմ
ք.Երևան, Հանրապետության հրապարակ,
Կառավարական տուն, 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ
ՀՎՀՀ 02505554

-----------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

«Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ
Ք. Երևան, ԲԱԲԱՋԱՆՅԱՆ Փ. 103-11
«Արարատբանկ» ԲԲԸ
Հ/Հ 1510032344900100
ՀՎՀՀ 02228296

-----------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
« 10 » 11 2025թ. կնքված
ՎԱ-ԱԱՏՄ-ԳՀԾՁԲ-26/11-1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց առավելագույն վճարումները նախատեսվում է իրականացնել 20 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 50311240/502 | Պատճենահանող սարքերի վերանորոգման ծառայություններ | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 2 | 50311240/509 | Պատճենահանող սարքերի վերանորոգման ծառայություններ | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 4 | 50311240/511 | Պատճենահանող սարքերի վերանորոգման ծառայություններ | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 5 | 50311240/512 | Պատճենահանող սարքերի վերանորոգման ծառայություններ | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 6 | 50311120/511 | Համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |

*Քանի որ պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*

*** Վճարումը կիրականացվի փաստացի մատուցված ծառայությունների դիմաց:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Վարչապետի աշխատակազմ
ք.Երևան, Հանրապետության հրապարակ,
Կառավարական տուն, 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ
ՀՎՀՀ 02505554

---------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

«Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ
Ք. Երևան, ԲԱԲԱՋԱՆՅԱՆ Փ. 103-11
«Արարատբանկ» ԲԲԸ
Հ/Հ 1510032344900100
ՀՎՀՀ 02228296

---------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 3
« 10 » 11 2025թ. կնքված
ՎԱ-ԱԱՏՄ-ԳՀԾՁԲ-26/11-1 ծածկագրով պայմանագրի

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| ______________________________ | ______________________________ |
| ______________________________ | ______________________________ |
| գտնվելու վայրը _____________ | գտնվելու վայրը _______________ |
| հհ ______________________ | հհ_______________________ |
| հվհհ ____________________ | հվհհ______________________ |

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N**
**ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

*« » « » 20 թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
______________________________________________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | | |
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Ծառայությունը հանձնեց | Ծառայությունն ընդունեց |
|---|---|
| ______________________________ | ______________________________ |
| ստորագրություն | ստորագրություն |
| ______________________________ | ______________________________ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված 3.1*
*« 10 » 11 2025թ. կնքված*
*ՎԱ-ԱԱՏՄ-ԳՀԾՁԲ-26/11-1 ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ________________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ____________-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ______________________ -ին կնքված N ______________________
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. __________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

________________________
ազգանուն, անուն

________________________
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

________________________
ազգանուն, անուն

________________________
ստորագրություն

Հավելված N 4
« 10 » 11 2025թ. կնքված
ՎԱ-ԱԱՏՄ-ԳՀԾՁԲ-26/11-1 ծածկագրով պայմանագրի

ԾԱՆՈՒՑՈՒՄ

______________________________________________ հայտնում է, որ .
ֆինանսական գործակալի անվանումը

1. ________________________-ի և ____________________-ի միջև «--» 20 թ. կնքված
պատվիրատուի անվանումը կատարողի անվանումը

«---------/---------» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակում իր և

_________________-ի միջև «--» 20 թ-ին կնքվել է «---------------------» ծածկագրով ֆակտորինգի
կատարողի անվանումը

պայմանագիրը,

2. համաձայն է Պայմանագրի 7.12 կետով սահմանված պահանջներին:

_____________________________________ ___________
ֆինանսական գործակալի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)

ստորագրությունը

Կ. Տ. (առկայության դեպքում)

«--» 20 թ.